

1.3. Գներ և սակագներ

2004թ. հունվար-փետրվարին գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(Նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	102.5	101.1	100.3	99.4	98.5	101.0
Փետրվար	99.4	105.2	97.9	100.8	101.0	99.5
Փետրվարը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ	101.9	106.3	98.2	100.2	98.4	100.1
2004թ. հունվար-փետրվարը 2003թ. հունվար-փետրվարի նկատմամբ	107.0	130.8	101.7	96.8	99.6*	104.1*

*) 2004թ. փետրվարի և 2003թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. հունվար-փետրվարին

(Նախորդ տարվա հունվար-փետրվարի նկատմամբ, %)




Սպառողական գներ: 2004թ. հունվարին ՀՀ սպառողական շուկայում արձանագրված 2.5% սղաճին փետրվարին հաջորդել է 0.6% գնանկում, ինչը հիմնականում պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխությունների արդյունք է:

2004թ. փետրվարին հունվարի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնանկումը կազմել է 0.8%, ծառայությունների սակագների նվազումը՝ 0.1%, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում գների ընդհանուր մակարդակը մնացել է անփոփոխ:

Սպառողական գների ինդեքսը 2004թ. փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 101.9%, ինչը 0.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (102.5%): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 102.8%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.2%, իսկ ծառայությունների ոլորտում պահպանվել է սակագների 2003թ. դեկտեմբերին գրանցված մակարդակը:

Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. փետրվարին


(Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2004թ. փետրվարին 2003թ. փետրվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 107.7%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 111.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 100.6%, ծառայությունների սակագներինը՝ 101.5%, իսկ հունվար-փետրվարին 2003թ. հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 107.0%, 109.9, 100.4 և 101.6%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-փետրվարին

(Նախորդ ամսվա նկատմամբ, %)




Արտարժուրային շուկա: 2004թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական և արժուրային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 0.6% և 0.7% նվազում: Փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 1.9% հավելաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 0.2% նվազումով: 2003թ. նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի, համապատասխանաբար, 2.5% և 0.3% հավելաճ: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2004թ. փետրվարին կազմել է 564.36 դրամ, ինչը 3.8%-ով ցածր է 2003թ. փետրվարի համապատասխան ցուցանիշից (586.36 դրամ):

Պարենային ապրանքների գներ: 2004թ. հունվարին պարենային ապրանքների շուկայում արձանագրված 4.0% գնաճին փետրվարին հաջորդել է 0.9% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է մրգի, ձվի և բանջարեղենի գնանկումով:


Մրգի ապրանքախմբում 2004թ. փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 2.3% գնաճ, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 10.0% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է խնձորի (12.1%), տանձի (16.8%), խաղողի (16.1%) գնանկումով: Ներմուծված մրգերից (ցիտրուսային և արևադարձային) ադամաթզի, նարնջի, մանդարինի, կիտրոնի գները նվազել են 15.3-3.6%: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում մրգի գնանկումը կազմել է 13.2-1.7% (գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք.Երևանում), Թալին և Եղեգնաձոր քաղաքներում արձանագրվել է, համապատասխանաբար, 6.9% և 18.2% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-փետրվարին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2004թ. փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 18.1% գնաճ, ինչը 16.5 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (34.6%): Փետրվարին հունվարի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 4.2%, ինչը հիմնականում պայմանավորվել է կաղամբի (18.1%), ճակնդեղի (14.4%), կարտոֆիլի (8.9%), գլուխ սոխի (7.3%), գազարի (8.0%) գնանկումով: Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 9.0-2.1% գնանկում (ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում), իսկ մյուս 4-ում՝ 0.2-10.0% գնաճ:

Բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-փետրվարին
(Նախորդ ամսվա նկատմամբ, %)



2004թ. հունվարին գրանցված ձվի 2.4% գնաճին փետրվարին հաջորդել է 8.4% գնանկում: Հանրապետությունում դիտարկված 9 քաղաքներում ձվի գնանկումը կազմել է 19.6-2.2% (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալիսում), իսկ ք. Կապանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Ձկնամթերքի ապրանքախմբում 2004թ. հունվարին արձանագրված 38.3% գնանկմանը փետրվարին հաջորդել է 9.1% գնաճ, ինչը պայմանավորվել է թարմ «սիգ» տեսակի ձկան 9.9% գնաճով: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում արձանագրվել է ձկնամթերքի 0.9-17.7% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում), իսկ Վանաձոր, Թալին և Դիլիջան քաղաքներում՝ 17.4-3.7% գնանկում:

Մսամթերքի ապրանքախմբում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է 0.9% գնաճ, ինչը հիմնականում խոզի մսի 5.8% գնաճի արդյունք է: Նշված ժամանակահատվածում տավարի և ոչխարի մսի գները նվազել են, համապատասխանաբար, 0.4% և 6.7%: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում արձանագրվել է մսամթերքի 1.2-6.3% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Դիլիջանում), իսկ մայրաքաղաքում՝ 0.6% գնանկում:

Կենդանական և բուսական յուղի գնաճը 2004թ. փետրվարին հունվարի համեմատ կազմել է 1.5%, պայմանավորված բուսական յուղի 2.2% գնաճով: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում կենդանական և բուսական յուղի գներն աճել են 1.2-3.2% (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Դիլիջանում), իսկ Թալին և Եղեգնաձոր քաղաքներում գրանցվել է, համապատասխանաբար, 0.7% և 0.8% գնանկում:

Սուրճի, թեյի, կակաոյի, շաքարավազի և հրուշակեղենի ապրանքախմբերում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է 0.7-3.1% գնաճ, իսկ կաթնամթերքի և ոչ ոգելից խմիչքի գները մնացել են հունվարի գների մակարդակին:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցված գների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում գրանցվել է ոգելից խմիչքի 0.2% գնաճ, իսկ ծխախոտի գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2004 թվականի			
	փետրվարը			հունվար-փետրվարը 2003թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.8	99.2	116.5	109.9
Պարենային ապրանքներ	103.1	99.1	118.2	110.6
հացամթերք	101.7	100.4	133.4	132.7
մսամթերք	103.9	100.9	113.4	110.8
ծկնամթերք	67.3	109.1	77.3	81.4
կաթնամթերք	101.4	100.0	99.7	98.7
ձու	93.8	91.6	121.8	110.1
կենդանական և բուսական յուղ	103.9	101.5	112.7	109.6
միրգ	102.3	90.0	117.1	95.7
բանջարեղեն և կարտոֆիլ	118.1	95.8	122.1	91.8
շաքարավազ	101.1	101.1	99.4	96.4
սուրճ, թեյ, կակաո	103.2	103.1	104.1	101.6
հրուշակեղեն	102.0	100.7	103.7	100.6
այլ մթերք	101.1	101.0	100.3	100.2
ոչ ոգելից խմիչք	100.8	100.0	104.6	103.2
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.0	100.0	102.2	103.2

Ոչ պարենային ապրանքների գներ. Ոչ պարենային ապրանքների շուկայում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցված գների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում գրանցվել են առանձին ապրանքատեսակների աճման և նվազման միտումով գնային փոփոխություններ: Գեղահարդարման ապրանքների, դեղամիջոցների, ոսկերչական ապրանքների գները նշված ժամանակահատվածում աճել են 0.1-1.3%: Վառելիքի, կահույքի, մշակույթի, հագուստի և կտորեղենի, կոշիկեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, անձնափոխ ապրանքների, շինանյութերի, գրենական պիտույքների ապրանքախմբերում արձանագրվել է 2.0-0.1% գնանկում, իսկ մյուս հետազոտվող ապրանքախմբերում պահպանվել է գների հունվարին գրանցված մակարդակը:

2004թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է բենզինի 2.7% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գինը նվազել է 0.3%: 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է բենզինի 4.7% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գծով՝ 2.8% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2004 թվականի			
	փետրվարը			հունվար-փետրվարը 2003թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում.</i>	100.2	100.0	103.0	100.4
հագուստ և կտորեղեն	99.9	99.9	102.1	99.5
վառելիք	98.9	98.0	127.2	102.5
կահույք	100.0	99.7	99.2	97.9
գորգեղեն	100.0	100.0	103.6	99.9
տեքստիլեղեն	100.1	100.0	97.8	97.5
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.0	99.8	95.7	96.1
խոհանոցային սպասք	100.1	100.0	102.2	101.3
լվացամիջոցներ	100.0	100.0	101.4	101.5
շինանյութեր	100.0	99.9	98.9	99.9
այգեգործական ապրանքներ	99.9	100.0	104.7	107.5
դեղամիջոցներ	100.6	100.5	93.3	95.9

	2004 թվականի			
	փետրվարը			հունվար-փետրվարը 2003թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
անձնական օգտագործման մեքենաներ և բեռնափոխակներ	103.4	101.9	112.2	104.2
մշակույթի ապրանքներ	99.6	99.6	97.0	97.8
գրեմական պիտույքներ	99.9	99.9	99.7	100.8
գեղահարդարման ապրանքներ	100.2	100.1	101.4	100.7
ոսկերչական ապրանքներ	103.6	101.3	127.6	111.0
անձնապիտո ապրանքներ	99.7	99.8	99.3	99.0

Ծառայությունների սակագներ: 2004թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրված ծառայությունների սակագների ընդհանուր մակարդակի անմշան նվազումը հիմնականում պայմանավորվել է տրանսպորտի (0.6%), հանգստի կազմակերպման (0.3%), կրթության համակարգի (0.2%), կենցաղային ծառայությունների (0.1%) սակագների նվազումով: Նշված ժամանակահատվածում բնակարանային-կոմունալ, կապի, հանրային սննդի, մշակույթի ծառայությունների սակագներն աճել են 0.1-6.7%, իսկ բուժսպասարկման, իրավական ու բանկային ծառայությունների սակագները մնացել են անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

	2004 թվականի			
	փետրվարը			հունվար-փետրվարը 2003թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ծառայություններ, ընդհանուր այդ թվում.	100.0	99.9	102.5	101.6
կենցաղային	99.9	99.9	99.2	99.3
բնակարանային-կոմունալ	99.7	100.1	99.8	99.7
բուժսպասարկման	100.3	100.0	100.8	101.3
տրանսպորտի	99.8	99.4	107.4	106.1
կապի	101.2	100.2	110.2	104.2
մշակույթի	101.8	106.7	127.4	123.4
կրթության համակարգի	99.9	99.8	100.6	98.4
հանգստի կազմակերպման	99.5	99.7	100.4	100.9
հանրային սննդի	100.3	100.3	105.0	102.5
իրավական և բանկային	100.2	100.0	100.0	100.0

Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկված 4 քաղաքներում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական զների մակարդակը նվազել է 1.0-0.1%, ընդ որում գնանկման անենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում: Հետազոտվող 5 քաղաքներում գրանցվել է 0.2-1.3% գնաճ, իսկ ք.Հրազդանում (Չարենցավանում) պահպանվել է զների նախորդ ամսվա մակարդակը:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2004թ. փետրվարի 29-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուր, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, միջինը	1281	1273	1627	705	520	257	118	331	94	262
<i>այդ թվում.</i>										
Երևան	1275	1300	1630	698	515	258	121	321	100	250
Գյումրի	1263	1300	1638	715	563	268	105	338	63	290
Վանաձոր	1350	1216	1550	686	538	236	120	358	70	280
Վաղարշապատ	1300	1200	1560	684	550	250	100	350	100	300
Թալին	1350	1200	1600	750	475	250	150	300	120	350
Դիլիջան	1400	1200	1700	750	525	260	150	350	100	250
Հրազդան, Չարենցավան	1300	1285	1600	705	500	252	115	350	100	205
Եղեգնաձոր	1350	1200	1600	700	500	240	130	350	150	350
Մարտունի	1150	1200	1700	750	500	260	75	375	50	300
Կապան	1240	1200	1740	738	550	266	135	330	100	300

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. փետրվարի 29-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6468 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Դիլիջանում՝ 6685 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Մարտունիում՝ 6360 դրամ), ինչը 10.1% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2003թ. փետրվարի 28-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5876դրամ):

Հանրապետությունում դիտարկված 5 քաղաքներում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.2-0.5% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վանաձորում), 3-ում՝ 0.1% գնանկում, իսկ Կապան և Գյումրի քաղաքներում պահպանվել է գների հունվարին գրանցված մակարդակը:


Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2004թ. փետրվարին հունվարի համեմատ հետազոտված 6 քաղաքներում գրանցվել է սակագների 0.5-0.1% նվազում, 3-ում՝ 0.2-0.5% հավելաճ, իսկ ք. Եղեգնաձորում պահպանվել է սակագների հունվարին գրանցված մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2004թ. փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

(%)

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում</i>				ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչք և ծխախոտ	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	101.9	102.3	103.1	100.0	100.2	100.0
<i>այդ թվում.</i>						
Երևան	101.7	102.0	102.7	100.0	100.2	100.0
Գյումրի	102.6	103.1	104.2	100.0	100.2	100.3
Վանաձոր	102.5	103.1	104.0	99.7	100.8	99.7
Վաղարշապատ	101.5	101.7	102.3	100.6	99.9	100.4
Թալին	103.6	104.3	105.7	100.3	100.1	100.1
Դիլիջան	104.1	105.0	106.8	100.1	99.6	99.6
Հրազդան, Չարենցավան	101.4	101.7	102.1	100.1	100.6	100.1
Եղեգնաձոր	103.3	104.0	105.4	100.0	100.0	100.1
Մարտունի	101.9	102.5	103.4	100.2	99.9	99.4
Կապան	101.8	102.3	103.1	99.8	100.3	99.6

Սպառողական գների ինդեքսը հանրապետության դիտարկված քաղաքներում 2004թ. հունվար-փետրվարին
(նախորդ տարվա հունվար-փետրվարի նկատմամբ, %)



Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2004թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 5.2%, ինչը 0.5 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա փետրվարի համապատասխան ցուցանիշից (5.7%):

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (%)

	2004 թվականի			հունվար-փետրվարը 2003թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	փետրվարը			
	2004թ. հունվարի նկատմամբ	2003թ. փետրվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը այդ թվում	105.2	132.0	135.0	130.8
էլեկտրաէներգետիկա	100.1	100.7	102.2	99.5
գունավոր մետալուրգիա	135.0	193.9	232.0	176.7
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.8	119.5	126.8	118.5
մեքենաշինություն	105.8	102.4	98.9	99.2
այլ արդյունաբերական արտադրու-թյուն(ոսկերչական արդյունաբերություն)	57.3	132.7	95.5	233.2
անտառային, փայտամշակման, թղթի-ցեյուլոզի արդյունաբերություն	100.8	99.3	102.6	100.4
շինանյութերի արդյունաբերություն	98.4	101.8	102.4	101.9
թեթև արդյունաբերություն	72.8	94.4	94.0	106.6
սննդի (ներառյալ այլուրի ու համակց -ված կերերի) արդյունաբերություն	102.2	128.9	128.6	127.9
պղիզորաֆիական արդյունաբերություն	100.0	82.6	101.9	84.3

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը: 2004թ. փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 0.2%, իսկ 2004թ. հունվարի համեմատ՝ 0.8%: Վերջինս մեծապես պայմանավորվել է խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 1.1% հավելաճով: Նշված ժամանակահատվածում օդային և ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են համապատասխանաբար 1.3% և 0.1%, իսկ երկաթուղային տրանսպորտում պահպանվել է սակագների հունվարին գրանցված մակարդակը:

2004թ. փետրվարին 2003թ. փետրվարի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 97.1%, այդ թվում երկաթուղային

տրանսպորտով՝ 96.9%, ավտոմոբիլայինով՝ 98.7%, օդայինով՝ 92.9%, խողովակաշարային տրանսպորտով՝ 97.3%, իսկ հունվար-փետրվարին 2003թ. հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար, 96.8%, 96.8, 99.0, 93.5, 96.9%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը: 2004թ. փետրվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գները հանրապետությունում նվազել են 1.6%-ով, իսկ 2004թ. հունվարի համեմատ գրանցվել է 1.0% գնաճ:

2004թ. փետրվարին հունվարին համեմատ արձանագրվել է բուսաբուծական մթերքի իրացման 2.1% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է մրգի (3.3%), կերային մշակաբույսերի (4.8%) իրացման գնակումով: Նշված ժամանակահատվածում բանջարեղենի և տեխնիկական մշակաբույսերի իրացման գները նվազել են, համապատասխանաբար, 1.9% և 1.0%, իսկ հացահատիկային մշակաբույսերի և մեղրի ապրանքախմբերում գրանցվել է, համապատասխանաբար, 4.5% և 3.2% գնաճ:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1999-2004թթ. փետրվարին

(դրամով)

	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Ցորեն	կգ	99	101	106	105	90	151
Գարի	- „,-	99	78	90	99	82	120
Լոբի	- „,-	354	315	425	427	395	366
Կարտոֆիլ	- „,-	97	80	113	120	146	84
Կաղամբ	- „,-	53	27	86	34	46	55
Գազար	- „,-	54	41	52	43	50	80
Գլուխ սոխ	- „,-	141	55	218	144	192	200
Խնձոր	- „,-	133	99	125	125	153	127
Տանձ	- „,-	183	131	127	144	239	192
Խաղող	- „,-	206	200	150	...	281	282
Ընկույզ (կեղևով)	- „,-	700	641	803	907	909	862
Մեղր	- „,-	2562	2437	2674	2732	2492	2521
Միս տավարի	- „,-	823	803	819	884	908	1005
Միս ոչխարի	- „,-	845	790	804	838	938	842
Միս խոզի	- „,-	770	823	1095	979	818	1329
Կաթ	լ	113	126	110	104	113	113
Մածուն	- „,-	187	172	182	186	182	183
Պանիր (յուղոտ)	կգ	917	880	856	800	827	831
Չուլ	հատ	49	48	45	45	46	48
Միամյա խոտեր	կգ	23	23	34	18	20	29
Բազմամյա խոտեր	- „,-	27	20	27	28	27	26

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2004թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է անասնապահական մթերքի իրացման 2.5% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է մսամթերքի 4.8% գնաճով: Նշված ժամանակահատվածում կաշվեհումքի, ձվի, կաթնամթերքի ապրանքախմբերում գրանցվել է 5.6-2.6% գնանկում, իսկ բրդի իրացման գինը հունվարի համեմատ մնացել է անփոփոխ:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2004թ. փետրվարին		2004թ. փետրվարին	
	2004թ. հունվարի նկատմամբ	2003թ. փետրվարի նկատմամբ	2004թ. հունվարի նկատմամբ	2003թ. փետրվարի նկատմամբ
<i>ՀՀ, ընդամենը</i>	101.0	97.6	99.5	103.4
այդ թվում.				
Արագածոտն	100.9	103.4	99.5	100.8
Արարատ	99.6	109.1	99.9	99.9
Արմավիր	95.0	99.6	99.8	103.4
Գեղարքունիք	96.4	82.3	102.4	107.6
Լոռի	97.5	116.4	101.2	106.5
Կոտայք	101.6	87.8	96.5	105.0
Շիրակ	118.7	124.3	100.7	102.1
Սյունիք	98.9	91.5	110.6	103.6
Վայոց ձոր	92.8	86.1	98.6	100.4
Տավուշ	123.9	131.0	98.2	100.3

2004թ. փետրվարին հունվարի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 0.5% նվազումը պայմանավորվել է գյուղատնտեսական մանր գործիքների (24.1%), անասունների (5.8%), պարարտանյութերի (3.3%), սերմացուների և տնկիների (3.0%) գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (19.3%) նվազումով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի, շինանյութերի գնման գնաճը կազմել է, համապատասխանաբար, 0.7% և 4.5%, իսկ բույսերի պաշտպանության միջոցների, մեքենասարքավորումների և պահեստամասերի գնման գները մնացել են անփոփոխ: